ՀՀ գլխավոր դատախազ՝

պարոն Արթուր Դավթյանին

Ե/ 289-10/2018

« 01» հոկտեմբերի 2018թ.

Հաղորդում հանցագործության մասին

Հարգելի պարոն Դավթյան,

2018 թվականի սեպտեմբերի 27-ին Հայաստանի տարբեր լրատվամիջոցներում տարածվեցին հրապարակումներ այն մասին, որ 254 անձինք զրկվել են դիվանագիտական անձնագրերից: Ավելի ուշ, ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի քարտուղար Տիգրան Բալայանը չի հերքել, որ լրատվամիջոցներում հրապարակված՝ Հայաստանի դիվանագիտական անձնագրերից զրկված անձանց ցանկը համապատասխանում է իրականությանը:

Վերը նշված հրապարակումներին սակայն չհաջորդեցին տեղեկություններն այն մասին, որ Հայաստանի դիվանագիտական անձնագրերից զրկված անձանց դիվանագիտական անձնագրեր տրամադրելու համար մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

«Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կոչումը վաշխառության, խարդախության, կոռուպցիայի, հարկերից խուսափելու, նմանատիպ այլ արատավոր երևույթների և մարդու իրավունքների ցանկացած տեսակի խախտումների դեմ պայքարն է, և հիմք ընդունելով վերը նշված կոչումը՝ «Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն իր պարտքն է համարում ՀՀ դատախազության ուշադրությունը հրավիրել վերը նշված դեպքի վրա, քանի որ ակնհայտ է, որ ոչ իրավաչափ հիմքերով դիվանագիտական անձնագրերից զրկված 254 անձինք այդ դիվանագիտական անձնագրերը ստացել են անձնագրերի տրամադրման համար պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունները չարաշահելու արդյունքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Ընդ որում, դիվանագիտական անձնագրեր ստանալու իրավունք չունեցող անձանց նման անձնագրեր տրամադրելն իր մեջ պարունակում է մի շարք կոռուպցիոն ռիսկեր, ինչը ևս կարծում ենք պետք է պարտադիր քննության առարկա դառնա:

Ուշադրության ենթակա է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի դիվանագիտական անձնագրեր ստանալու իրավունք չունեցող անձանց նման անձնագրեր տրամադրելու արդյունքում ՀՀ պետական բյուջեին պատճառվել են վնասներ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հարուցել քրեական գործ և Հայաստանի դիվանագիտական անձնագրերից զրկված թվով 254 անձանց դիվանագիտական անձնագրեր տրամադրած պաշտոնատար անձանց իրենց պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար ենթարկել քրեական պատասխանատվության:

Կից ներկայացնում ենք ԶԼՄ-ների հրապարակումներ:

«Վելես » Իրավապաշտպան ՀԿ
նախագահ՝ Մ.Պողոսյան

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ
VELES
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան , Չարենց 4, բն. 121; Հեռ.՝ +(374 10) 57 85 51, +(374 91) 40 35 13
Թեժ գիծ՝ 08000-13-13, Կայք՝ www.veles.am , Էլ. փոստ՝ velesngo@gmail.com, info@veles.am